ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՇԱԳՐԱՎ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գ. Ղարիբյանի, Ա. Խառատյանի, Ռ. Իսահակյանի «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացումները և մարդկային կապիտալի վերարտադրության հիմնախնդիրները անկախության տարիներին» (Եր., 2017, 338 էջ) մենագրությունը մարդկային կապիտալի զարգացման հիմնական դրսևորումների խոր և բազմակողմանի վերլուծություն է, որն արժեքավոր է նախ և առաջ իր կառուցվածքով. անկախության տարիների Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացումների հետազոտությամբ բացահայտվում են մարդկային կապիտալի վերարտադրության հիմնախնդիրները: Նման կառուցվածքով գիտական հետազոտություն Հայաստանի Հանրապետությունում կատարվում է առաջին անգամ:

Ուշագրավ է հետազոտության մեթոդաբանությունը: Նախ՝ ընտրվել է ՀՀ զարգացման որոշիչ գործոնը՝ մարդկային կապիտալը, համառոտակի վերլուծվել դրա վերարտադրության առանձնահատկությունները նախախորհրդային և խորհրդային Հայաստանում: Երկրորդ՝ համապարփակ ներկայացվել է Խորհրդային Միության փլուզման ազդեցությունը Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացումների վրա: Երրորդ՝ բացահայտվել են մարդկային կապիտալի արդյունավետ վերարտադրության հիմնախնդիրները և լուծման ուղիները ստեղծված սոցիալ-տնտեսական բարդ պայմաններում:

Աշխատանքում անդրադարձ է կատարվել մարդկային կապիտալի տեսության կայացման գործընթացին ու պատմությանը, այդ տեսությանը վերաբերող հայ տնտեսագետների մեկնաբանություններին, մարդկային կապիտալի զարգացման և վերարտադրության հայաստանյան առանձնահատկություններին:

Ի տարբերություն կապիտալի ավանդական տեսակների (արտադրողական, դրամական, ապրանքային), որոնք հետազոտման դարերի պատմություն ունեն (սկսած 17-րդ դարից), մարդկային կապիտալը հետազոտողների ուշադրության կենտրոնում է հայտնվել միայն 20-րդ դարի 60-ականներից, իսկ Հայաստանի Հանրապետությունում ավելի ուշ՝ 2000 թվականներից: Ուստի այն կապիտալի քիչ հետազոտված տեսակ է: Ավելին, այն ամենաարտադրողական կապիտալն է, որի կարևորությունը հատկապես մեծ է նյութական սակավ ռեսուրսներ ունեցող երկրներում, որոնցից է նաև Հայաստանը: Զարգացած երկրներում գիտելիքահենք տնտեսությունների հիմնասյուներից մեկը մարդկային կապիտալն է:

Մենագրության հիմնական մասը նվիրված է անցումային ժամանակահատվածում Հայաստանի մարդկային կապիտալի կորուստների պատճառահետևանքային կապերի և առկա հիմնախնդիրների բացահայտմանը: Քննարկվող հարցերի տեսական վերլուծությունների հիմքում ընկած են ինչպես պաշտոնական վիճակագրական տվյալները, այնպես էլ առանձին գիտական հետազոտությունների արդյունքները, որոնք առավել ամբողջական և բազմակողմանի են ներկայացնում հետազոտվող գործընթացները: Հեղինակները վերլուծական անհրաժեշտ նյութը հավաքելու հարցում առաջնությունը տվել են սկզբնաղբյուրներին՝ վիճակագրական ծառայության հրատարակած մարդահամարների տվյալներին, վիճակագրական տարեգրքերին, «ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը» տարեկան հրապարակումներին և այլն:

Աշխատանքում արտացոլվել են նաև հեղինակների սեփական հետազոտությունների արդյունքները, որոնցից են, օրինակ, բնակչության կենսամակարդակի և ժողովրդագրական հարցերի (ընտանիքի բյուջե, բաշխման հարաբերություններ, սպառում, մարդկային կապիտալ) վերաբերյալ՝ 1960-ականներից ի վեր պրոֆ. Գ. Ղարիբյանի իրականացրած հետազոտությունները: Հեղինակների հետազոտությունների մի մասը տրված է հղումների ձևով կամ համառոտ վերլուծությամբ, մյուսները՝ ավելի հանգամանորեն: Մասնավորապես, ներկայացվել է 2008 թ. ՀՀ կենտրոնական բանկի պատվերով պրոֆ. Գ. Ղարիբյանի ղեկավարած հետազոտական խմբի կողմից Հայաստանի Հանրապետության 6129 տնային տնտեսությունների ուսումնասիրության հիման վրա կատարված «Աշխատանքի շուկայի վերլուծություն» հետազոտական աշխատանքը:

Մենագրությունում վերլուծվել և բացահայտվել են Արևելյան Եվրոպայի և նախկին Խորհրդային Միության երկրներում «շոկային թերապիայի» մեթոդով իրականացված շուկայական բարեփոխումների սխալները: Հայաստանում կապիտալի նախասկզբնական կուտակման ավելի սուր ու ցավալի բացասական դրսևորումները հեղինակներն իրավացիորեն կապում են ինչպես Սպիտակի երկրաշարժի, տնտեսական շրջափակման և Ղարաբաղյան շարժման, այնպես էլ Հայաստանում շուկայական տնտեսական համակարգին անցնելու անարդյունավետ մոդելի ընտրության և խիստ կոռուպցիոն զարգացումների հետ՝ աններելի համարելով Հայկական ատոմակայանի և «Նաիրիտ» գիտաարտադրական միավորման գործունեության դադարեցումը, խոշոր արդյունաբերական այլ արտադրությունների վերացումը, բնակչության շուրջ 10 մլրդ դոլարին համարժեք խնայողությունների սառեցումը, հողի ոչ ժամանակին ու ոչ արդյունավետ սեփականաշնորհումը, մասնավորեցումը և նման բնույթի մի շարք այլ որոշումներ ու գործընթացներ: Հեղինակները գտնում են, որ հողի սեփականաշնորհման այդ ձևը ցավալի հետևանքներ է թողել մինչ օրս՝ հանգեցնելով այն բանին, որ ե-

րիտասարդները, հատկապես սահմանամերձ և բարձր լեռնային գյուղերից արտագաղթում են, դպրոցներում սովորողների թիվը նվազում է, առանձին գյուղերում անգամ դպրոցներ են փակվում:

Աշխատանքում բացահայտվել են մարդկային կապիտալում ՀՀ տնային տնտեսությունների ներդրումային անբավարար հնարավորությունները ու խիստ անհավասարաչափ բնույթը: Բնական ու տնտեսական սակավ ռեսուրսներ ունեցող Հայաստանի կայուն զարգացման և բնակչության գոնե նորմալ կենսամակարդակի հասնելու հիմնական ուղին հեղինակները տեսնում են մարդկային կապիտալում ներդրումների ծավալների ավելի մեծ աճի մեջ: Մի կողմից՝ ՀՀ պետբյուջեից մարդկային կապիտալի վերարտադրությանն ուղղված ներդրումների անբավարար մակարդակը, մյուս կողմից՝ Հայաստանի բնակչության մեկ երրորդի աղքատ լինելը էապես սահմանափակում են մարդկային կապիտալում ներդրումային հնարավորությունները:

Վերլուծելով ՀՀ մարդկային կապիտալի վերարտադրության բացասական միտումները՝ մենագրությունում անդրադարձ է կատարվել, մասնավորապես, Հայաստանում քիչ ուսումնասիրված բազմաչափ աղքատության հետազոտությանը: Մարդկային կապիտալի արդյունավետ վերարտադրության զարգացումների և առաջիկա հեռանկարների տեսանկյունից հեղինակները հատկապես խիստ մտահոգիչ են համարում Հայաստանում առկա մանկական աղքատության սուր բնույթը:

Մենագրությունում նշվում է, որ մարդկային կապիտալի վերարտադրության խնդիրների քննարկումները և լուծումները այժմ գտնվում են Հայաստանի Հանրապետության նախագահի և կառավարության ուշադրության կենտրոնում: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թ. ծրագրում առաջին անգամ որպես հատուկ կարևոր ռազմավարական խնդիր ներկայացված են մարդկային կապիտալի զարգացումը և գործազրկության կրճատումը:

Մենագրությունում անհրաժեշտ ուշադրության է արժանացել սոցիալական խոր շերտավորման իրավիճակում հարուստների, միջին դասի և աղքատների համակեցության պայմանների և հոգեբանական մթնոլորտի ստեղծման հարցը: Սոցիալ-տնտեսական որոշակի խնդիրների, մասնավորապես, արտագաղթի կանխման կարևոր միջոցառումների շարքում հեղինակները անբավարար են համարում մշակույթի, գրականության, հատկապես հեռուստատեսության ու մամուլի միջոցով բարոյահոգեբանական, հայրենասիրական, ազգի անկախ գոյատևման ու զարգացման ամենօրյա դաստիարակությունը և քարոզչությունը: Նրանք գտնում են, որ սոցիալական տարբեր շերտերի, տարբեր շահերի համակեցության ստեղծման և արտագաղթի կասեցման, արտագաղթի դեմ հոգեբանության ձևավորման գործում, բացի տնտեսագետներից, իրավաբաններից, սոցիոլոգներից, անհրաժեշտ է ներգրա-

վել նաև հոգեբանների, գրողների, արվեստի գործիչների, եկեղեցին և ընդհանրապես մտավորականության լայն խավերին:

Աղքատությունը, արտագաղթը հաղթահարելու ու կանխելու և երկրի ազգային անվտանգությունը հուսալի դարձնելու հարցում աշխատանքում կարևորվում է գյուղական բնակչության բնական աճի խթանումը՝ ընդգծելով, որ դարերով պետականությունը կորցրած Հայաստանի հայապահպանման խնդիրները հիմնականում լուծել են գյուղը, գյուղի ավանդական ընտանիքը, գյուղական դպրոցը: Գյուղերի մի մասի դպրոցների փակումը, կենտրոնացումը և դրանց նման օպտիմալացումը կարող են ավելի մեծացնել արտագաղթը, մասնավորապես վաղվա պոտենցիալ զինվորների արտագաղթը:

Արտագաղթի կանխման հիմնախնդիրը մենագրությունում առանձնակի է շեշտադրվում: Հեղինակները գտնում են, որ իշխանությունները, մտավորականությունը և ամբողջ հասարակությունը այսօր պետք է ամեն ինչ անեն, որպեսզի արտագաղթը կանխվի՝ դրա անհրաժեշտ պայման համարելով կայուն և բարձր տեմպերով տնտեսական աճ ապահովելու հիման վրա բնակչության կենսամակարդակի բարձրացումը, բավարար պայման՝ ՀՀ կառավարության 2016 թ. ծրագրով նախատեսված կոռուպցիայի և ստվերային տնտեսության դեմ արդյունավետ պայքարի միջոցառումների իրականացումը:

Ուշագրավ է, որ մենագրությունում մարդկային կապիտալի հիմնախնդիրների քննարկումներին հեղինակները, ըստ էության, «մասնակից» են դարձրել հայ պոեզիայի մեծերից Հ. Թումանյանին, Ե. Չարենցին և Հ. Սահյանին՝ իրենց ստեղծագործություններում տվյալ ժամանակաշրջանի խնդիրները արտացոլելու առումով:

Ամբողջությամբ վերցրած՝ մենագրությունը գիտական լուրջ հետազոտություն է ՀՀ անկախության տարիների սոցիալ-տնտեսական բարդ, հակասական զարգացումների և դրանցով պայմանավորված՝ մարդկային կապիտալի վերարտադրության հիմնախնդիրների ու դրանց հնարավոր լուծումների մասին: Այն շարադրված է տեսամեթոդական բարձր մակարդակով, փաստական նյութերի հետազոտության, ընդհանրացումների և դրանցից բխող գիտական գնահատականների ու եզրահանգումների միջոցով, որը միանգամայն հաջողված եզակի գիտական հետհայացք է երկրի անցած քառորդ դարին:

ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՀՊՏՀ գիտության և արտաքին կապերի գծով
պրոռեկտոր, տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր